ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀԿԳՄՍՆԳՀԱՊՁԲ-21/46 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով սարքերի, հաստոցների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 11.08.2021թ. ժամը 12:00-ին էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Արմեն Ավետիսյան /գնահատող/
Հանձնաժողովի անդամներ՝	Հովսեփ Գրիգորյան /գնահատող/
	Հարություն Մարտիրոսյան /գնահատող/
	Տիգրան Արաքսման-Մանուկյան /բացող/
	Հասմիկ Տոնոյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝	Աննա Սիմոնյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 ՀՀԿԳՄՍՆԳՀԱՊՁԲ-21/46 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված ՀՀԿԳՄՍՆԳՀԱՊՁԲ-21/46 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Էլ. Հասցեները
1	«ՌՎ ՊՐՈՋԵԿՏՍ» ՍՊԸ	rvprojects@mail.ru

3. Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

3.1 Մասնակցի կողմից ներկայացված հայտը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:

4. Տվյալներ յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

4.1 Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

5. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

5.1 Մասնակիցը ներկայացրել էհետևյալ գնային առաջարկները.

Չափա-բաժին	Նախահաշվային գինը, ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները	
		«ՌՎ ՊՐՈՋԵԿՏՍ» ՍՊԸ	
		Առաջարկված գինը, ՀՀ դրամ	
		Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ
1	250000	100000000	120000000*
2	80000	100000000	120000000*
3	80000	100000000	120000000*
4	150000	100000000	120000000*
5	60000	-	-

* Մասնակցի գնային առաջարկները գերազանցում են նախահաշվային գինը:

6. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

6.1 «ՌՎ ՊՐՈՋԵԿՏՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ 3-րդ և 4-րդ չափաբաժինների համար առաջարկվող ապրանքների տեխնիկական-բնութագրերը լրացված են թերի՝ բացակայում են առաջարկվող ապրանքների ֆիրմային անվանումները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

7. Գնահատման գործընթացի կասեցման մասին.

7.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել «ՌՎ ՊՐՈՋԵԿՏՍ» ՍՊԸ-ին 6.1 կետով արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

7.2 Հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել 2021թ օգոստոսի 13-ին, ժամը 12:30-ին, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 6-րդ հարկ, 611 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 13.08.2021թ. ժամը 12:30-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Արմեն Ավետիսյան /գնահատող/
Հանձնաժողովի անդամներ՝	Հարություն Մարտիրոսյան /գնահատող/
	Տիգրան Արաքսման-Մանուկյան /բացող/
	Հասմիկ Տոնոյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝	Աննա Սիմոնյան
Բացակայում էր՝	Հովսեփ Գրիգորյան /գնահատող/

8. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.

8.1 «ՌՎ ՊՐՈՋԵԿՏՍ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

9. Գնահատման գործընթացի կասեցման և միաժամանակյա բանակցությունների կազմակերպման մասին.

9.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.17թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և «ՌՎ ՊՐՈՋԵԿՏՍ» ՍՊԸ-ին հրավիրել ներկայացված գների նվազեցման շուրջ բանակցությունների ս.թ օգոստոսի 17-ին, ժամը 11:00-ին, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 6-րդ հարկ, 611 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 17.08.2021թ. ժամը 11:00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Արմեն Ավետիսյան /գնահատող/
Հանձնաժողովի անդամներ՝	Հարություն Մարտիրոսյան /գնահատող/
	Տիգրան Արաքսման-Մանուկյան /բացող/
	Հասմիկ Տոնոյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝	Աննա Սիմոնյան

Բացակայում էին՝

Հովսեփ Գրիգորյան /գնահատող/

«ՌՎ ՊՐՈՋԵԿՏՍ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ

10. Գնման գործընթացին հայտ ներկայացրած մասնակիցների հետ բանակցությունների վարման մասին.

10.1 «ՌՎ ՊՐՈՋԵԿՏՍ» ՍՊԸ-ի ներկայացուցչի բացակայության պատճառով, վերջինիս հայտով ներկայացված գնային առաջարկը թողնել անփոփոխ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

11. Տվյալներ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

11.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 10.1 կետը՝ «ՌՎ ՊՐՈՋԵԿՏՍ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել՝ գնային առաջարկը նախահաշվային գինը գերազանցելու հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

12. Գնահատման արդյունքների մասին.

12.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-րդ կետը՝ գնման գործընթացը 1-4-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած, հայտերից ոչ մեկը հրավերի պայմաններին չհամապատասխանելու հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

12.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը՝ գնման գործընթացը 5-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած, ոչ մի հայտ չներկայացվելու հիմնավորմամբ:

Գնահատող հանձնաժողով՝

_____ Արմեն Ավետիսյան /նախագահ/

_____ Հարություն Մարտիրոսյան

_____ Տիգրան Արաքսման-Մանուկյան

_____ Հասմիկ Տոնոյան

_____ Աննա Սիմոնյան /քարտուղար/